



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՅ**

«10» Դեպրեմբեր 2017 թ.

№ 2/344-ՆԿ

**Հ Ր Ա Մ Ա Ն**

Ա.ՄԻՐԶՈՅԱՆԻՆ, Մ.ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ, Տ.ԻԿԱՆՅԱՆԻՆ, Ն.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՎ  
Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 09/2017 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ Արմինե Միրզոյանին, նույն տեսչության հարկային հսկողության բաժնի պետ Մելիք Բարսեղյանին, նույն բաժնի գլխավոր հարկային տեսուչ Տիգրան Իվանյանին, հարկային տեսուչ Նելսոն Ղուկասյանին և Կապանի տարածքային հարկային տեսչության հարկային հսկողության բաժնի պետ Կարեն Հովհաննիսյանին հայտարարել „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ,,:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ